ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում և համայնքներում երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելու և խթանելու, երիտասարդական քաղաքականության համակարգված, հասցեավորված ու նպատակային իրականացմանն աջակցելու, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելու և երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելու նպատակով, կազմվում է Տավուշի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ:

Խորհրդի կազմի ոչ պետական թեկնածուի ընտրության համար հայտարարվում է մրցույթ:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը 16-30 տարեկան երիտասարդ է, որը համապատասխանում է հետևյալ չափանիշներին՝

- երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը.
- երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ.
- երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողներին խնդրում ենք համայնքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժին ներկայացնել անձնագրի պատճենը և ինքնակենսագրությունը: Փաստաթղթերն ընդունվում են մինչև ս/թ փետրվարի 10-ը:

Իջևանի համայնքապետարան